

... Ու որպեսզի այդ թամաշավոր-ժողովրդի սիրտը շահած լինեն ու բարեկամ պահած, միշտ գոռում են «ժողովրդի» անունը: Խոսքն ընչի մասին ուզում է լինի, միշտ վերջացնում են «ժողովուրդով»: «ժողովուրդն այսպես է կամենում... ժողովուրդը մեզ հետ է... ժողովուրդը ձեզ կդատի... Ո՛ր ես, ժողովուրդ, անարգում են քեզ...»:

Այդ հերիք չէ դեռ: Ժողովուրդն էլ են կեղծում:

Իրենց մարդկանցից ոմանց հանդես են բերում կեղծ ստորագրություններով, անգրագետներին իրենց շինած հողվածներով ու ներկայացնում որպես ժողովուրդ:

- Տեսե՛ք, ժողովուրդը մեզ հետ է:

Դե եկե՛ք ու ջոկեցե՛ք իսկականը կեղծիքից: Եվ ո՞վ պիտի ջոկի, ե՞րբ, ո՞ր մի տեղը...

Կեղծիք ու խաչագողություն՝ ամեն օր, ամեն տեղ, ամեն տեսակի:

Եվ մի ժողովուրդ, որ այսքան կեղծիքներ ու կեղծավորներ ունի, այսքան խարդախներ ու խաչագողներ ունի, չի սիրվի, որքան կուզե խելոք լինի, որքան կուզե գոռա, թե կուլտուրական եմ ես...



ՀՈՎԻՏԱՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Չորեքշաբթի
13 հունվարի 2021թ.
№ 1 (543)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՄՅՈՒՆԻՔԻ ԱՇԽԱՐՀ» ԱՄՅԱՆԱԾՈՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈՎՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru



Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Սյունիքը մեր պետականության ողնաշարն է, եւ պետք է ձեռնարկենք անվտանգության ապահովման բոլոր միջոցները

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մոտ այսօր կայացած խորհրդակցության ժամանակ քննարկվել են Սյունիքի մարզի սահմանային միջավայրի փոփոխությանը պայմանավորված իրավիճակը եւ անվտանգության ապահովման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները:

Բացելով խորհրդակցությունը՝ վարչապետ Փաշինյանը նշել է. «Հարգելի գործընկերներ, այսօրվա մեր խորհրդակցությունը նվիրված է Սյունիքի մարզի խնդիրներին, եւ մենք այսօր պետք է քննարկենք հարցերի բավական լայն շրջանակ: Հայտնի իրադարձությունների բերումով Սյունիքի սահմանային միջավայրն էական փոփոխություններ է կրել, եւ այսօր պետք է քննարկենք այն միջոցառումները, որ իրականացվում են Սյունիքի հատվածում Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովելու համար, պետք է քննարկենք մինչ այժմ իրականացված աշխատանքները եւ թե ինչպես պետք է շարունակենք այդ աշխատանքները ու ինչ ուղղությամբ: Իհարկէ, շատ կարեւոր են սոցիալ-տնտեսական, կոմունիկացիոն խնդիրները, կարեւոր են նաեւ բնապահպանական խնդիրները, եւ հարցերի բավական լայն շրջանակ ունենք քննարկելու:

Բազմիցս եմ առիթ ունեցել ասելու, որ Սյունիքը համարում եմ մեր պետականության ողնաշարը, եւ մենք պետք է բոլոր միջոցները ձեռնարկենք Սյունիքում Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովելու համար՝ ոչ միայն Սյունիքում, այլեւ ամբողջ հանրապետության տարածքում, բայց Սյունիքն այս առումով ունի առանձնահատուկ նշանակություն: Նաեւ պետք է քննարկենք, թե ինչ սոցիալական եւ տնտեսական ծրագրեր ենք իրականացնելու այն համայնքներում, որոնք սահմանային նոր կարգավիճակ են ստացել՝ ըստ էության, հայտնվել են սահմանային բնակավայրերի կարգավիճակում: Եվ այսօր կկայացնենք որոշումներ, ձեռք կբերենք պայմանավորվածություններ եւ կպայմանավորվենք նաեւ դրանց հետագա իրականացման ընթացքի վերաբերյալ»:

Վարչապետին զեկուցվել է Սյունիքի սահմանամերձ համայնքների եւ ճանապարհների անվտանգության ապահովման, սահմանային կետերի տեղորոշման աշխատանքների, բաղաձայնների հնարավոր գույքային վնասների փոխհատուցման գործընթացի եւ հարակից այլ խնդիրների լուծման ընթացքի մասին:

Արձանագրվել են ընթացիկ արդյունքները, քննարկվել են դեռեւս առկա խնդիրների հնարավոր լուծումները եւ հետագա անելիքները՝ ճանապարհային, հարողակցության ենթակառուցվածքների բարելավման, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման եւ այլ ուղղություններով:

Վարչապետ Փաշինյանը հանձնարարել է գործընթացում ներգրավված պատասխանատու մարմիններին՝ արդեն իսկ ձեռնարկվող միջոցառումները, ինչպես նաեւ խնդիրների գույքագրման եւ լուծման աշխատանքները շարունակել միջերախոսակա աշխատանքային խմբի շրջանակում, որն օպերատիվորեն կարձանագրի պրոբլեմները եւ լուծումներ կտա:

GOV.AM



ՇՈՒՆՈՒԿ, 2.01.2021 թ., հայը նորից տնագուրկ եւ տնանկ է դառնում, իսկ մենք՝ ազգովի, շարունակում ենք միմյանց կոկորդ պատռել՝ Նիկոլն է լավ, Վազգենը, Ռոբերտը, թե՛...

Թվում էր, թե 2020-ը պատմության գիրկն ենք ճանապարհել, բայց ոչ...

2020 թվականը շարունակվում է...

Այսօր՝ 2021 թ. հունվարի 2-ին, Շոունուկ գյուղի արեւելյան հատվածը (Մ-2 մայրուղուց արեւելք) պաշտոնապես փոխանցվում է թուրք-ազերիներին...

Տասնմեկ տան բնակիչներ վերջին ճիգերն են գործադրում տարիներով իրենց արած-դրածը փրկելու համար. վերջնաժակետը հունվարի 5-ն է:

Գորիս համայնքի ավագանու անդամներն ու համայնքապետն են այնտեղ..., բայց ի՞նչ կարող են անել: Հազիվ հասցնում են օգնել մարդկանց՝ իրենց ինչքը տեղափոխել

ճանապարհից վերել, քանզի ճանապարհն այլեւս պետական սահման է Ադրբեջանի անբեկանելի եւ անսակարելի կամքով:

Ադրբեջանի սահմանապահ զորքերի (գուցե եւ այլ ծառայությունների) ներկայացուցիչներն են դատարկվող տների մեծակայքում վիստում, վրաններ տեղադրում, որ իրենց ժամանակավոր կեցավայրն է լինելու:

Ռուս սահմանապահներն են այնտեղ... Ապահովում են, որ ամեն ինչ տեղի ունենա առանց բախումների: Եվ պատրաստվում են, որ Մ-2 մայրուղու՝ գյուղամիջով անցնող հատվածում պարեկապահակային ծառայություն իրականացնեն հունվարի 5-ից:

Հայաստանի Հանրապետության սահմա-

նապահները նույնպես այնտեղ են:

...Այն, ինչ տեղի է ունենում Շոունուկում, աներեւակայելի է: Համեմայնեցաք ամիսներ, նույնիսկ օրեր առաջ որեւէ ողջամիտ հայի մտքով չէր անցնի: Որեւէ մեկը չէր կարող պատկերացնել, որ Սյունյաց աշխարհի հնամենի Շոունուկը կկիսվի...

Հայ մարդուն տնանկ եւ տնագուրկ անելու մասին ժամանակին իմանում էինք բացառապես դասագրքերից:

Եվ երբ խոսում էինք այդ մասին, մտովի տեղափոխվում էինք միջնադար եւ, իհարկէ, 1915 թվական...

Իսկ հիմա...պատմությունը կրկնվում է,

Շարունակությունը՝ էջ 7

Նիկոլ Փաշինյանի, Վլադիմիր Պուտինի եւ Իլհամ Ալիևի հանդիպման արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն

Մոսկվայում կայացած 33 վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևի եռակողմ հանդիպման արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն: Հայտարարությունը ներկայացնում ենք ստորև:

«Ադրբեջանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի եւ Ռուսաստանի Դաշնության Նախագահի հայտարարությունը, 11 հունվարի 2021 թ.:

Մենք՝ Ադրբեջանի Հանրապետության Նախագահ Ի.Յ. Ալիևը, Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն. Վ. Փաշինյանը եւ Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վ. Վ. Պուտինը հայտարարում ենք հետեւյալի մասին.

1. 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության՝ տարածաշրջանում բոլոր տնտեսական եւ տրանսպորտային կապերն ապաշրջանակելու մասին 9-րդ կետի իրականացման նպատակով աջակցում ենք Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի Հանրապետության փոխվարչապետների համատեղ նախագահությամբ եռակողմ աշխատանքային խումբ ստեղծելու մասին Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վ. Վ. Պուտինի առաջարկը:

2. Աշխատանքային խումբն առաջին



հանդիպումը կանցկացվի մինչեւ 2021 թ. հունվարի 30-ը, որի արդյունքների հիման վրա կկազմվի Հայտարարության 9-րդ կետի կիրառման փուլ աշխատանքների հիմնական ուղղությունների ցանկը՝ որպես գերակայություններ ընդունելով երկաթուղային եւ ճանապարհային հաղորդակցությունները, ինչպես նաեւ կապիտալի Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ կողմեր) միջեւ համաձայնեցված այլ ուղղություններ:

կաթուղային եւ ճանապարհային հաղորդակցությունները, ինչպես նաեւ կապիտալի Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ կողմեր) միջեւ համաձայնեցված այլ ուղղություններ:

3. Գործունեության հիմնական ուղղություններն իրականացնելու նպատակով աշխատանքային խմբի համանախագահները կհաստատեն այդ ոլորտներում փորձագիտական ենթախմբերի կազմը, որում կներառվեն կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչներ եւ կազմակերպությունների պաշտոնատար անձինք: Փորձագիտական ենթախմբերը, աշխատանքային խմբի նիստից հետո մեկամսյա ժամկետում կներկայացնեն նախագծերի ցանկ, որում կներկայացնեն անհրաժեշտ ռեսուրսներն ու միջոցառումները՝ դրանց իրականացման եւ կողմերի կողմից ամենաբարձր մակարդակով հաստատելու համար:

4. Աշխատանքային խումբը մինչեւ 2021 թ. մարտի 1-ը կողմերի կողմից ամենաբարձր մակարդակով հաստատման կներկայացնի Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության տարածքով իրականացվող միջազգային փոխադրումների կազմակերպման, իրականացման եւ անվտանգության ապահովման համար անհրաժեշտ նոր տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտների վերականգնման եւ կառուցման միջոցառումների իրականացման ցանկ եւ ժամանակացույց, Նույն կերպ Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող փոխադրումների համար, որոնք պահանջում են հատել Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության տարածքները»:

Այս ապացույցն ուղարկեցի Շուռնուխի գյուղապետին եւ Սյունիքի ղեկավարությանը

Հաղորդակար, լրագրող Նաիրի Հոխիկյանն անդրադարձել է ԽՍՀՄ տարիներին Հայաստանի ՍՍՀ եւ Ադրբեջանի ՍՍՀ սահմանի մոտ գտնվող բնակավայրերի խնդրին.

«Սյունիքի մարզի Շուռնուխ բնակավայրը ԽՍՀՄ տարիներին Հայաստանի ՍՍՀ եւ Ադրբեջանի ՍՍՀ սահմանից հեռու է եղել առնվազն 1կմ: Դա են վկայում նաեւ 1961թ. հրատարակված պաշտոնական ատլասի քարտեզները՝ հաստատված ԽՍՀՄ ամենաբարձր մակարդակով:

Քարտեզում հստակ երեւում է, որ Գորիս-Կապան ճանապարհից մինչեւ սահման առնվազն 1 կմ հեռավորություն կա: Քարտեզի մասշտաբը 1:1.000.000 է:

Շուռնուխի 11 տները կառուցված են անմիջապես ճանապարհի կողքին, հետեւաբար ամբողջությամբ մտնում են 33 տարածքի մեջ: Եթե ուշադիր նայենք, կնկատենք նաեւ, որ

ճանապարհի որեւէ հատված Ադրբեջանի ՍՍՀ տարածքով չի անցնում:

Ատլասը տրամադրելու համար շնորհակալ եմ Gayane Muqoyan-ին: Այս ապացույցը եւս ուղարկեցի Շուռնուխի գյուղապետին եւ Սյունիքի ղեկավարությանը՝ թշնամու սեղանին դնելու եւ առայժմ բանակցային ճանապարհով մեր տարածքները պահելու համար: Այս փաստական ապացույցները շարունակում եմ համառորեն ներկայացնել նաեւ 33 կառավարությանը:

Եթե վերջապես մեկին սա պետք է, պատրաստ եմ ձեզ հետ եւս կիսվել: Ադրբեջանի հետ Մոսկվայում բանակցելիս հաստատ պետք կգա: Եթե ես պաշտոնապես ներկայացնեի 33-ն ու հայկական ազգային պետական շահերը, ինձ միանշանակ պետք կգար յուրաքանչյուր նման փաստ», – գրել է Հոխիկյանը:

08.01.2021

Շուռնուխ. 45 ընտանիքից երկուսն են գյուղից դուրս եկել, որոնց վերադարձի համար պայմաններ են ստեղծվում

Շուռնուխ գյուղում տեղի ունեցող իրադարձությունները կապված սահմանորոշման եւ 11 ընտանիքի տարահանման հետ, շարունակում են մտալ հանրության ուշադրության կենտրոնում:

Հունվարի 3-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը Շուռնուխում էր եւ հետեւում էր զարգացումներին:

Ամբողջ օրն այնտեղ էր նաեւ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Դողդյանը, ում խնդրեցինք պատասխանել Շուռնուխի անջվող եւ հանրությանը մտահոգող, ցավոտ եւ հույժ հրատապ մի քանի հարցի:

– **Պարոն մարզպետ, այս պահին չենք ուզում անդրադառնալ Շուռնուխի շուրջ առաջացած խնդիրների ռազմաքաղաքական պատճառներին, թեեւ դրանք շատ կարեւոր են ու խոսակցության առանձնահատուկ թեմա: Այս պահին կուզենայինք լույս սփռել այն կոնկրետ եւ գործնական քայլերի վրա, որ արվում են ու բխում ստեղծված իրավիճակից:**

Եվ այսպես՝ Շուռնուխ գյուղի ո՞ր հատվածն է անցնում Ադրբեջանի վերահսկողության ներքո եւ քանի՞ ընտանիք էր այդտեղ բնակվում:

– Շուռնուխ գյուղով է անցնում, ինչպես գիտեք, Մ-2 ավտոմայրուղին, որից արեւելք կամ որից ներքեւ ընկած հատվածը՝ ձախ մասի առաջին տնից մինչեւ նախավերջին տունը՝ ճանապարհին կից, անցնում է Ադրբեջանի հսկողության ներքո: Ընդամենը 11 տուն կամ նույնքան ընտանիք:

Նույն ուղղության վերջին տունը մտնում է մեր տարածքում:

– **Ադրբեջանը, որբանով մեզ հայտնի է, այդ ընտանիքներին զբաղեցրած տներից դուրս բերելու վերջնամասվետ եր սահմանել՝ 5 հունվարի: Մնացել է մեկերկու օր, հասցրե՞լ էք տարիանել 11 ըն-**



տանիքը:


– Տարիանման աշխատանքները գրեթե ավարտվել են, դուրս բերված ընտանիքները տեղավորվել են գյուղի մեր տարածքում: Երկու ընտանիքի տեղավորման խնդիր կար. Նրանց համար, ինչպես Դուք տեսաք, փայտյա երկու տնակ ենք ձեռք բերել (յուրաքանչյուրը երեք սենյակից բաղկացած) եւ տեղադրել:

Մարդիկ դուրս են բերել նաեւ իրենց գույքը, իսկ թեթե չօգտագործվող ինչ-որ իրեր մնացել են, ապա դա բնակիչների կամքով է եղել:

– **Կարո՞ղ ենք ստույգ փաստել, թե գյուղում քանի ընտանիք կար տարահանումից առաջ եւ հիմա:**

– 45 ընտանիքից մեկը տեղափոխվել է Կապան, մեկն է՝ Գորիս: Պայմաններ ենք ստեղծում, որ նրանք վերադառնան.

Հարունակությունը՝ էջ 7



Սյունիքի մարզի Շուռնուխ բնակավայրը ԽՍՀՄ տարիներին Հայաստանի ՍՍՀ եւ Ադրբեջանի ՍՍՀ սահմանից հեռու է եղել առնվազն 1կմ

GPS-ի և Google քարտեզների կիրառումով Ադրբեջանի վերահսկողության ներքո են անցել Կապանից դեպի ճակատեն ու այլ գյուղեր տանող ճանապարհահատվածներ

ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում, Ագարակ, Եղվարդ, ճակատեն և այլ գյուղերում շարունակվել են մեր այցերը:

Ուսումնասիրություններ են կատարվել Կապանի օդանավակայանի վարչական շենքի և թռիչքուղիների տարածքներում, որոնց անմիջական հարեանությամբ են գտնվում ադրբեջանական տեղակայման վայրերը: Ուսումնասիրությունները վկայում են, որ վտանգներ են առաջացել ոչ միայն Կապանի օդանավակայանի, այլ նաև Կապանից Երեւան տանող (U2) միջպետական ճանապարհով տեղաշարժի ու Կապան քաղաքի մի շարք բնակելի վայրերի համար:

Կապան քաղաքի օդանավակայանի և վերջ Նշված գյուղերի տարածքներում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի այցի ընթացքում հենց տեղում Գուգլ (Google) և առցանց քարտեզների մի քանի այլ տարբերակներ ցույց են տվել տարբեր արդյունք, այդ թվում՝ մի քանի դեպքում Կապանից ճակատեն գյուղ տանող ճանապարհը, ինչպես նաև Կապանի օդանավակայանի այն հատվածները, որոնցում տեղակայված են ադրբեջանական ուժերը, ամբողջությամբ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության տարածքի մասեր:

Մարդու իրավունքների պաշտպանի այսօրվա այցերը Կապան քաղաք և Կապանի գյուղեր վկայում են, որ մինչ այս պահը կիրառվող մոտեցումների ու հատկապես Գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) կամ Գուգլ քարտեզների (Google map) մեխանիկական կիրառության արդյունքում այստեղ են լուրջ սպառնալիքներ են ստեղծվել սահմանային բնակիչների կյանքի իրավունքի ու անվտանգության, նրանց ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության ու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված կենսական կարեւորության մյուս իրավունքների համար կամ դրանց մի մասն արդեն իսկ կոպտորեն խախտվել է: Վտանգվել է ՀՀ պետական սահմանների անվտանգությունը:

Մասնավորապես, այդ սկզբունքի մեխանիկական կիրառումով ադրբեջանական

վերահսկողության ներքո են անցել Կապանից դեպի ճակատեն ու այլ գյուղեր տանող ճանապարհի տարբեր հատվածներ, որոնք իրական վտանգի տակ են դրել խաղաղ բնակիչների տեղաշարժը: Ընդ որում, պետք է պարտադիր հաշվի առնել, որ ճակատեն, Շիկահող, Սրաշեն, Լեռքին Հանդ, Ծավ գյուղերի անվտանգության ու բնակիչների կենսական նշանակության իրավունքների համար այս ճանապարհն ունի բացարձակ կարեւորություն:

Նշվածից բացի, օրինակ, ճակատենում, Ագարակում կամ Եղվարդում մարդիկ ուղղակի գրկվել են իրենց կենսական ապրուստը հոգալու, դրա համար անհրաժեշտ գյուղատնտեսական հողատարածքները (օրինակ՝ մասնավոր կամ տնտեսական գործունեության կարիքների համար որպես այգի, վարելահող կամ արոտավայր) օգտագործելու հնարավորությունից: Ընդ որում, այստեղ նույնպես խոսքը վերաբերում է այնպիսի հողատարածքների, որոնց նկատմամբ իրավունքների, այդ թվում՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը հաստատող վկայականները տրվել են կամ Խորհրդային Հայաստանի, կամ Հայաստանի անկախ Հանրապետության տարբեր ժամանակահատվածների իրավասու մարմինների (կադաստրի կոմիտե և այլն) կողմից:

Մինչդեռ, սահմանների որոշման միջազգային կանոններն ուղիղ պահանջում են, որ երկրի պետական սահմանները որոշելու ժամանակ առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի սահմանային բնակիչների իրավունքներին, նրանց անշարժ գույքին կամ այլ սեփականությանը վերաբերող հարցերին և այլն: Անհրաժեշտ է նախապես պարզել այն անձանց, որոնք սահմանների որոշման գործընթացի պատճառով գրկվելու են իրենց բնակարանի, հողատարածքի, ձեռնարկատիրական մասնավոր օբյեկտի ու այլ գույքի նկատմամբ իրավունքներից: Պետք է նկատի ունենալ, որ նրանք ունեն հատուցում ստանալու արդարացի իրավունք: Սահմանների որոշման գործընթացում պետության առաջնահերթ խնդիրներից է

լուծել սահմանային բնակիչների կենսական կարիքների համար անհրաժեշտ արտոնվարների ու անտառների, ջրային պաշարների անվտանգ օգտագործման երաշխավորման հարցերը:

Ուստի, մինչ այս պահը կիրառվող մոտեցումները ու հատկապես ՀՀ սահմանների հարցը GPS [գլոբալ տեղորոշման] համակարգով կամ Գուգլ (Google) մասնավոր կազմակերպության հավելվածներով լուծելը, որոնք նաև վտանգում են Հայաստանի պետական սահմանների անձեռնմխելիությունն ու երկրի անվտանգությունը, մեր երկրում ապրող մարդկանց ու հատկապես սահմանային բնակիչների իրավունքների ապահովման տեսանկյունից, բացարձակ անընդունելի է:

Սահմանային դարձած գյուղական բնակավայրերի բնակիչների հետ Մարդու իրավունքների պաշտպանի այսօրվա հանդիպումները, համայնքային մարմինների հետ քննարկումներն ու ուսումնասիրությունները հաստատում են, որ ադրբեջանցի զինվորականները զինված պարբերաբար հայտնվում են Հայաստանի Հանրապետության Նշված քաղաքացիական բնակավայրերն իրար միացնող ճանապարհների տարբեր հատվածներին ու դա անում են ստորոգելով խաղաղ զենքի բացահայտ ցուցադրումով՝ խաղաղ բնակիչներին ահաբեկելու նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները


վկայում են, որ Կապանում, Ագարակում, Եղվարդում և սահմանային դարձած այլ բնակավայրերում բնակիչները չեն տիրապետում սահմանների որոշմանն ու իրենց իրավունքներին առնչվող տեղեկությունների. սա առաջացնում է անորոշ վիճակ և ստեղծում տագնապի մթնոլորտ ու անհանգստություն՝ խաղաղ բնակիչների մեջ:

Այսօրվա այցի ընթացքում տեղի են ունեցել կարևոր հանդիպումներ Կապանի քաղաքապետի, Եղվարդ, Ագարակ և մի շարք այլ գյուղական բնակավայրերի ղեկավարների ու համայնքային մյուս մարմինների հետ, համայնքների բնակիչների, ինչպես նաև ՀՀ զինված ուժերի և ԱԱԾ սահմանապահ զորքերի անձնակազմերի հետ: ՀՀ զինված ուժերի և ԱԱԾ սահմանապահ զորքերի անձնակազմերն իրականացնում են անձնուրաց հերոսական ծառայություն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը այսօրվա այցերի ընթացքում ձեռք է բերել նաև կոնկրետ իրավիճակներով մարդկանց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ փաստեր, որոնց կապակցությամբ կիրականացվեն առանձին ամփոփումներ ու կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ:

Վաղը նախատեսվում է այց Մեղրի քաղաք:

ԱՐՄԱՆ ԹԱԹՅԱՆ
09.01.2021



Նռնաձորում գրեթե 200 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքները բնակիչները չեն կարողանում օգտագործել

Նռնաձորում բնակիչների ընթացքում պարզվել է, որ գյուղի գրեթե 200 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքները բնակիչները չեն կարողանում օգտագործել վարչաիրավական ու դատական մի շարք գործընթացների պատճառով: Այս հարցով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը կձեռնարկի անհրաժեշտ միջոցներ: Ընդ որում, թե՛ Մեղրիի համայնքապետի, թե՛ Նռնաձորի բնակիչների պնդմամբ՝ պատերազմական գործողությունների ավարտից հետո այս հարցը դարձել է խիստ արդիական:

Նռնաձորի բնակիչների հետ Մարդու իրավունքների պաշտպանի հանդիպումների, համայնքային մարմինների հետ քննարկումների ու տեղերում ուսումնասիրությունների շնորհիվ պարզվել է, որ ՀՀ պետական սահմանների որոշման կիրառված մոտեցումների պատճառով պատերազմական գործողություններից հետո գյուղում առկա են հողատարածքներ (օրինակ՝ մասնավոր կամ տնտեսական գործունեության կարիքների համար որպես այգի, վարելահող կամ արոտավայր), և բնակիչները գրկվել են դրանք օգտագործելու հնարավորությունից, որոնք անհրաժեշտ են նախնաառաջ իրենց կենսական ապրուստը հոգալու համար:

Մարդու իրավունքների պաշտպանի աշ-

խատակազմի ուսումնասիրությունները նաև վեր են հանել, որ սպառնալիքներ են առաջ եկել սահմանային բնակիչների կյանքի իրավունքի ու անվտանգության, նրանց ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության ու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված կենսական կարեւորության մյուս իրավունքների համար կամ դրանց մի մասն արդեն իսկ խախտվել է:

Հայաստանի իշխանության մարմինները պետք է ՀՀ պետական սահմանների որոշման հետ ուղղակիորեն կապված այս հարցերը դարձնեն առաջնահերթ քննարկման առարկա՝ կապված մեր երկրի սահմանային բնակավայրերի, կոնկրետ դեպքում՝ Նռնաձորի բնակիչների իրավունքների անխոչընդոտ իրականացումը երաշխավորելու հետ: Անընդունելի է, որ ներկայում բացակայում է ՀՀ պետական կառավարման մարմինների անմիջական հարողակցությունը գյուղի բնակիչների հետ Նշված հարցերով:

Օրինակ՝ իՆչ անի այն մարդը, ով ունի հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը հաստատող վկայական, սակայն ադրբեջանական զինվորականների ուղիղ թիրախի տակ լինելու պատճառով այդ հողատարածքի օգտագործումն իրական վտանգի կենթարկի

Հարունակությունը՝ էջ 6

Ադրբեջանական վերահսկողության տակ են Գորիսը, Որոտանն ու Շուռնուխն իրար կապող ճանապարհի հատվածներ

Աշխատանքային եռօրյա այցով մեր աշխատակազմով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում ենք: Նախատեսված են այցեր Գորիս, Շուռնուխ, Որոտան, Կապան, Մեղրի և այլ համայնքներ:

Գորիս, Որոտան ու Շուռնուխ կատարած այցերը հաստատում են, որ Գլոբալ տեղորոշման համակարգի (GPS) կամ Գուգլ քարտեզների (Google map) մեխանիկական կիրառության արդյունքում լուրջ սպառնալիքներ են ստեղծվել Հայաստանի սահմանային բնակիչների կյանքի իրավունքի ու անվտանգության, նրանց ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության ու կենսական կարեւորության մյուս իրավունքների համար, որոնք երաշխավորված են միջազգայնորեն ու մեր երկրի Սահմանադրությամբ: Վտանգվել է ՀՀ պետական սահմանների անվտանգությունը:

Մասնավորապես, այս սկզբունքի մեխանիկական կիրառումով ադրբեջանական վերահսկողության ներքո են անցել, օրինակ,

Գորիսը, Որոտանն ու Շուռնուխն ու այլ բնակավայրեր իրար միավորող ճանապարհի տարբեր հատվածներ, որոնք ուղիղ վտանգի տակ են դրել խաղաղ բնակիչների տեղաշարժը:

Սահմանային դարձած բնակավայրերի բնակիչների հետ Մարդու իրավունքների պաշտպանի այսօրվա հանդիպումները, համայնքային մարմինների հետ քննարկումներն ու ուսումնասիրությունները հաստատում են, որ ադրբեջանցի զինվորականները կատարում են սարսափներ. զինված պարբերաբար հայտնվում են խաղաղ բնակավայրերի անմիջական հարեանությամբ ճանապարհներին ու դա անում են զենքի ցուցադրումով՝ խաղաղ բնակիչներին և առաջին հերթին կանանց ու երեխաներին ահաբեկելու նպատակով:

Նշվածից բացի, գլոբալ տեղորոշման համակարգի (GPS) կամ Գուգլ քարտեզների (Google map) մեխանիկական կիրառության արդյունքում, օրինակ, Որոտանում ու Շուռնուխում մարդիկ ուղղակի գրկվել են իրենց

Հարունակությունը՝ էջ 6

Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց բազորդիներին

Արցախյան երրորդ պատերազմում զոհված սյունեցիների մասին տեղեկություններ՝ 29.12.2020թ. դրությամբ

Անուններ, որ հավերժորեն գրանցվել են Սյունյաց աշխարհի փառքի մատյանում...

Ամանորի եւ Սուրբ Ծննդի շեմին պարտքս եմ համարում առաջին անգամ ամբողջապես հանրայնացնել Արցախյան երրորդ պատերազմում նահատակված սյունեցիների անունները, որ հայտնի են այսօրվա դրությամբ:

Եվ քանի որ այս Ամանորն ու Սուրբ Ծնունդը բացառիկ են իրավիճակի թելադրությամբ, իսկ ավելի ճիշտ ու նախեստառաջ հիշատակի օրեր են լինելու ըստ էության, ապա, նահատակ սյունեցիների անունները հրապարակելու հետ մեկտեղ, աղոթք եմ բարձրացնում առ Աստված՝ նրանց հոգու հանգստության համար: **Նաեւ ներողություն եմ խնդրում բոլորից ու յուրաքանչյուրից, որ չկարողացանք նրանց կյանքը փրկել...**

Ունենք նաեւ պատերազմի ընթացքում անհետ կորած սյունեցիներ. հույս ունեմ, որ հրաշք կկատարվի, եւ նրանք կվերադառնան ողջ...

Իսկ պատերազմում վիրավորված մեր տասնյակ հայրենակիցներին՝ շուտափույթ ասպաքինում եւ առողջություն:

**ՄԵԼԻՔՍԵՏ ԴՈՂՈՍՅԱՆ
ՍՅՈՒՆԵՑԻ ՄԱՐԾՊԵՏ
29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021Թ.**



Հ.Հ.	Անուն, ազգանուն	ծննդյան տարեթիվ	Բնակավայրը, (հաշվառման հասցեն)
1	Ներսիսյան Սասուն Գրեհիկի	2002	Կապան
2	Խլղաթյան Գառնիկ Էդգարի	2001	Կապան
3	Գրիգորյան Արամ Սամվելի	2000	Կապան
4	Մուրադյան Շավարշ Մարտունի	1996	Կապան
5	Սարգսյան Նարեկ Սամվելի	2001	ք. Ագարակ
6	Խաչատրյան Ալբերտ Արմենի	1994	ք. Ագարակ
7	Համբարձումյան Սուրեն Բագրատի	1992	ք. Ագարակ
8	Հայրապետյան Արմեն Գրիգորի	1987	Մեղրի
9	Ղուկասյան Գեորգ Կորյունի	2001	Քարաշեն
10	Հարությունյան Գոռ Յուրիի	1996	Կոռնիձոր
11	Պողոսյան Արշավիր Աշոտի	1966	Տեղ
12	Միրզոյան Վահե Հայկազի	2000	Քաջարան
13	Խաչատրյան Մարատ Վլադիկի	1979	Քաջարան
14	Բակունց Վահե Վահագնի	2001	Գորիս
15	Սաֆյան Սենիկ Սերյոժայի	1970	Գորիս
16	Մաթեոսյան Էդգար Արթուրի	1984	Կապան
17	Արզումանյան Հասմիկ Սմբատի	1985	Սիսիան
18	Ֆիլիպոսյան Տարոն Հրայրի	2000	Սիսիան
19	Պետրոսյան Վաչե Արարատի	1996	Սիսիան
20	Գալստյան Արթուր	1964	Սիսիան
21	Մուրադյան Գարիկ Սերոբի	1994	Սիսիան
22	Շահնազարյան Էդուարդ Վարդանի	1994	Արծվանիկ
23	Թումանյան Գրիշա Նորայրի	1995	Կապան
24	Պողոսյան Սարգիս Սամվելի	1990	Կապան
25	Ֆարմանյան Ալեքսանդր Նաիրիի	1996	Երեւան
26	Թեւանյան Դավիթ Սամվելի	1989	Սիսիան
27	Գրիգորյան Հովհաննես Կառլենի	199	Սիսիան
28	Գրիգորյան Ռազմիկ Թեմանի	1998	Քաջարան
29	Ղարիբյան Կարեն Ռուդիկի	1982	Քաջարան
30	Սաֆյան Արայիկ Հովհաննեսի	1989	Սիսիան
31	Սաֆյան Գեղամ Սերժիկի	1984	Սիսիան
32	Պողոսյան Վրեժ Սեյրանի	1992	Սիսիան
33	Ամարյան Սամսոն Հրաչիկի	1988	Սիսիան
34	Հարությունյան Կարեն Սեյրանի	2000	Քաջարան
35	Ներսիսյան Գարիկ Սերյոժայի	1978	Կապան
36	Մարտիրոսյան Նարեկ Շիրազի	1993	Քարաշեն
37	Գեւորգյան Արմեն Հրանտիկի	1979	Կապան
38	Խաչատրյան Նորայր Արարատի	1979	Կապան
39	Մովսիսյան Վարդան Սերյոժայի	1983	Քաջարան
40	Ավետիսյան Գուրգեն Կարոյի	1995	Քաջարան
41	Հովհաննիսյան Արսեն Եղիշի	1983	Ագարակ
42	Խաչատրյան Ջիվան Ռոբերտ	1994	Ագարակ
43	Ծատրյան Անդրանիկ Սերժիկի	1989	Ագարակ
44	Սինանյան Նարեկ Սերգեյի	1992	ք. Գորիս
45	Մանուկյան Նարեկ Սուրենի	2000	Սիսիան

Հ.Հ.	Անուն, ազգանուն	ծննդյան տարեթիվ	Բնակավայրը, (հաշվառման հասցեն)
46	Ասրյան Սերոբ Սարմենի	1998	Արավուս
47	Գրիգորյան Էրիկ Սերգեյի	1983	Կապան
48	Հայրապետյան Կարեն Վարդգեսի	1979	Գորիս
49	Մալինցյան Արսեն Սամվելի	1973	Գորիս
50	Բազունց Սեւակ Ռուբիկի		Խնձորենկ
51	Անտոնյան Վրոյր Սիամանյոյի	1977	Քաջարան
52	Խաչատրյան Խաչատուր Գուրգենի	1982	Քաջարան
53	Խաչատրյան Արթուր Արարատի	1992	Վերիշեն
54	Ավետիսյան Հովհաննես Նիկոլայի	1967	Գորիս
55	Հարությունյան Արման Ռադիկի	1984	Կապան
56	Հակոբյան Արեգ Աշոտի	1977	Կապան
57	Վարդանյան Հարություն Սամվելի	1982	Կապան
58	Պողոսյան Արտեմ Հենրիկի	1982	Կապան
59	Առաքելյան Արմեն Ալիկի	1996	Քաջարան
60	Մնացականյան Վարդան	1989	Սիսիան
61	Արզումանյան Արեն Հովիկի	2000	Կապան
62	Անտոնյան Արտեմ Վլադիմիրի	1978	Կապան
63	Ղուկասյան Դավիթ Երվանդի	1980	Կապան
64	Փարամազյան Արշակ Հրաչիկի	1983	Կապան
65	Իսայան Վահրամ Վազգենի	1980	Կապան
66	Վարդանյան Հարություն Սամվելի	1982	Կապան
67	Մկրտչյան Վազգեն Ռուդիկի	2000	Լեհվազ
68	Իսունց Գեորգ Ռաֆիկի	2000	գ. Տեղ
69	Քյարունց Գագիկ Ռազմիկի	1998	գ. Տեղ
70	Ավանեսյան Բորիս Վարուժանի	1990	Կապան
71	Գրիգորյան Կարեն Գեդեոնի	2001	Կապան
72	Արիստակեսյան Կոլյա Ռաֆիկի	1990	Սիսիան
73	Գրիգորյան Հայկ Դավթի	1985	Սիսիան
74	Գալստյան Արմեն	1998	Սիսիան
75	Իսրայելյան Կարեն Չոհրաբիկի	1990	Շաքի
76	Դանիելյան Դավիթ Հմայակի	1990	Շաքի
77	Օհանյան Յուրի Սամսոնի	1998	Բռնակորթ
78	Կեւորգով Յուրի Նիկոլայի	1985	Քաջարան
79	Պապյան Արամ Հրաչիկի	1973	Քաջարան
80	Հարությունյան Ռուդիկ Ֆրունզիկի	1982	Կապան
81	Դանիելյան Էդուարդ Գառնիկի	1983	Կապան
82	Մանասյան Արսեն Լեւի	1999	Կապան
83	Օհանյան Արման Մայիսիկի	1996	Կապան
84	Պետրոսյան Արմեն Գեւորգի	1995	Սիսիան
85	Հակոբջանյան Տիգրան Դրաստամատի	1978	Որոտան գյուղ
86	Հակոբջանյան Մարատ Մարտունիկի	1982	Շամբ գյուղ
87	Գրիգորյան Վլադ Ալբերտի	1999	Աղիտու գյուղ
88	Ազարյան Արեգ Բորիկի	1988	Լճիեռ գյուղ

Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց բազորդիներին

Դավիթ Մաթեոսյան. նրա կյանքը հայրենապաշտության վառ օրինակ է

Հրադարարից երկու ամիս անց անգամ չենք կարողանում ամբողջացնել Արցախյան երրորդ պատերազմում նահատակված պոլիտեցիների լրիվ անվանացանկը: Մի բան է ակնհայտ՝ մարզում չկա բնակավայր, որ չունենա զոհված կամ անհետ կորած զավակ: Եվ փորձում ենք խորանալ նահատակներից յուրաքանչյուրի կենսագրության, մարտական ուղու մանրամասների մեջ: Ու ամեն դեպքում ակներև է դառնում, որ գործ ունենք հայրենիքին անձնուրացորեն նվիրվելու իրողության հետ: Այդ հանգամանքն էլ հիմք է դառնում, որ հուզմունքի ու սգի միջից նորովի վերընծյուղվեն մեր ազգային հպարտությունը, մեր պատասխանատվությունը հայրենիքի ներկայի ու գալիքի հանդեպ: Մանավանդ որ հայրենիքը եւ հատկապես Սյունիքը շարունակում են մնալ վտանգի մեջ...



Այսօր առանձնահատուկ ակնածանքով ենք ուզում հիշել մեր նորոյա պատերազմի հերոսներից մեկին՝ Դավիթ Մաթեոսյանին: Եվ ոչ միայն հիշում ենք, այլև խոնարհվում նրա անմեռ հիշատակի առջեւ, նաեւ փաստում, որ նրա ու մյուս նահատակների արյամբ երիցս սրբագործվել է Սյունյաց հողը, որ նորովի է հայրենացել մեր լեռնաշխարհը:

Ու որքան հեռանում ենք 2020 թ. հոկտեմբերի 22-ի օրվանից, երբ տարածվեց Դավիթ Մաթեոսյանի մահվան բոլոր, ու մի նոր տրտմություն իջավ Սյունյաց տան վրա, ավելի հաստատուն է դառնում մեր ձգտումը՝ ներողություն հայցելով՝ չհամաձայնել Համո Սահյան նահապետի մի բանաձեռնումին՝ «Իմ մահով ոչինչ չի փոխվի կյանքում»: Չէ, այդպես չի լինում, դա ճիշտ չէ մարդկային ամեն մի կորստի դեպքում, հատկապես երբ մահը վասն հայրենյաց է լինում, հատկապես երբ մարդ հայրենիքի զոհաներդան է բարձրանում գիտակցաբար: Այդպես է նաեւ Դավիթ Մաթեոսյանի դեպքում. նրա մահով շատ բան է փոխվել ու փոխվում առնվազն մեր անկրկնելի Արեւիք աշխարհում: Նրա մահով կորցրեցինք պոլիտեցու մաքրամաքուր արժանիքները կրող անհատականություններից եւս մեկին...

Դավիթ Մաթեոսյանի մասին շատերն են խոսք ասել նրա մահվան առիթով ու դրանից առաջ եւ հետո: Եվ դեռ ասվելու է...

Ինքն էլ հիշողություններ ունեւ՝ հատկապես նրա կյանքի այն շրջանից, երբ Սյունիքի նորաստեղծ մարզի ղեկավարի (մարզպետի) տեղակալն էր՝ փոխմարզպետը...

Անշուշտ, ծանոթ էինք նրա նախորդ շրջանի կենսագրությանը, բայց 1996-98 թվականներին, հիրավի, նորովի բացահայտվեց նրա լուսավոր կերպարը Սյունիքի մարզի մի շարք ոլորտներում ու համայնքներում:

Նրա գործունեությունն ի սկզբանե չէր տեղավորվում փոխմարզպետի ի վերուստ սահմանված պաշտոնական լիազորությունների շրջանակում:

Ավելին էր, բան փոխմարզպետը կարող էր լինել կամ պետական պաշտոն եւ աստիճան ունեցողը:

Կարողանում էր մտածել երկրի, հանրապետության կտրվածքով:

Կարողանում էր վեր բարձրանալ անձնականից եւ ասպրել երկրի, ազգի ընդհանրական շահերով, ինչին քչերն են ընդունակ:

Եվ մեր ժողովրդի վերածնունդն ու առաջադիմությունը տեսնում էր արդարության, ճշմարտության, բարոյականության մեջ:

Նրա տաք շունչը, ոչ ստանդարտ մտածելակերպը, նորի հանդեպ ձգտումը զգացվում էին մարզային կյանքի մի շարք ոլորտներում:

Մի խոսքով՝ ինքն առողջ, թաքն ու ակտիվ մի զեմիոն էր, որ այդ տարիներին թեւածեց նորաստեղծ մարզի կառավարման համակարգում:

Ի դեպ, դա սովորական ժամանակ չէր. պատերազմը նոր-նոր էր ավարտվել, իսկ Սյունիքի մեծաթիվ վերբերը բուժել էր պետք...

Եվ իր գործունեությամբ մարզի իշխանական համակարգին յուրովի եռանդ ու ոգեւորություն էր փոխանցում:

Եվ որ մի ոլորտով էլ զբաղվում էր՝ առաջադիմությունն անխուսափելի էր դառնում: * * *

Դավիթ Մաթեոսյանին դեռ պատանեկան տարիներից էին նկատել Մեղրու շրջանի դեկավարներն ու փորձել նրա գիտելիքները, եռանդն ու կազմակերպչական ունակությունները ծառայեցնել շրջանի զարգացմանը:

1982-ին Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմելիորացիայի ֆակուլտետն ավարտելուց հետո (ինժեներ-հիդրոտեխնիկի մասնագիտությամբ) պատասխանատու պաշտոններ է վարել շրջանում Ազարակի հանքաշինական վարչության աշխույժ, ոռոգման եւ ջրօգտագործման վարչության ինժեներ, կոմերիտիության շրջկոմի պատասխանատու աշխատող, Կարճեանի պետական տնտեսության տնօրեն, ԼԳ Մեղրու բաժնի պետ...

Բոլոր այդ պաշտոններում էլ դուստրել է եռանդ եւ աշխատասիրություն, հանձնարարված գործի նկատմամբ պատասխանատվություն, հայրենի բարոյների հանդեպ տիրոջ սրտացավություն:

Այդ ամենի համար է նաեւ, որ նրան ընդգծված հարգանքով ու պատկառանքով են վերաբերվել ոչ միայն բնօրրան Մեղրիում, այլև ամբողջ մարզում ու մեր երկրամասի սահմաններից դուրս:

Հովհաննես Թումանյան անհասանելի գագաթը մի առիթով ուշագրավ դիտարկում է արել՝ «Անհատներ կան, որ առանց իշխանության կարողանան»

Հ.Հ.	Անուն, ազգանուն	Ծննդյան տարեթիվ	Բնակավայրը, (հաշվառման հասցեն)
89	Հովակիմյան Սամսոն Միշայի	1992	Միսիան
90	Գրիգորյան Վահագն Արտուշի	1996	Միսիան
91	Արչունց Արման Արտուշի	2001	Գորիս
92	Սարգսյան Մայիս Կոյայի	1991	Գորիս
93	Միրզոյան Արեն Կարենի	2002	Գորիս (Արցախից է)
94	Բաբայան Վահան Գագիկի	1987	Գորիս (Վերիշեն)
95	Մաթեոսյան Դավիթ Դեռնդի	1960	Կարճեան
96	Բեգլարյան Մակար Ջանիկի	1980	Մեղրի
97	Հարությունյան Անդրանիկ Համլետի	1968	Տաշտուն
98	Դավթյան Վարդան Վահանի	1985	Միսիան
99	Քարամյան Վահե Արսենի	1988	Միսիան
100	Նավասարդյան Ալեն Արտակի	1989	Քաջարան
101	Սարգսյան Նորայր Փայլակի	1967	Քաջարան
102	Մուրադյան Հարութ Ֆրիկի	2000	Տաթև
103	Գասպարյան Դավիթ	1973	Գորիս
104	Խաչատրյան Անուշավան Վարուժանի	1985	Շաղաթ
105	Մուրադյան Աշոտ Հովհաննեսի	2001	Շաքի
106	Ղուկասյան Տիգրան Լենտրուշի	1974	ք. Ազարակ
107	Եսայան Պարույր Արամայիսի	1972	Միսիան
108	Բաբայան Աշոտ Մանասերի	1983	Շաղաթ
109	Կիրակոսյան Արայիկ Եղիկի	1991	Անգեղակոթ
110	Բաբաջանյան Գեորգ Արտաշի	1996	Բուննիս
111	Սարգսյան Նարեկ Տիվանի	1993	Միսիան
112	Մովսիսյան Ներսես	1990	Միսիան
113	Խաչատրյան Դավիթ Հովնակի	1991	գ. Բռնակոթ
114	Հարությունյան Նարեկ Սենիկի	1988	Միսիան
115	Կարապետյան Հրահատ Փայլակի	1983	Շաքի
116	Լալաբեկյան Սերգեյ Սամվելի	1997	Կապան
117	Գրիգորյան Շահեն Արսենի	1970	Կապան
118	Գարակյան Սեյրան Գրիշայի	1973	Կապան
119	Բարդազյուկյան Աշոտ Վարագդատի	1973	Խնձորեսկ
120	Մարտիրոսյան Արտաշես Արմանի	2002	Քաջարան
121	Պողոսյան Հրաչյա Վաչիկի	1978	Գորիս
122	Սաթունց Տիգրան Մարտունիի		Գորիս
123	Դանիելյան Ավետիք Ավչարի	1978	Ակներ
124	Պասյան Գարիկ Արմենի	1987	Քաջարան
125	Թունյան Սաթո Միքայելի	2000	Աղիտու
126	Ավետիսյան Մարտիկ Պասիշի	1960	Դավիթ Բեկ
127	Ստեփանյան Հրաչ Գագիկի	1983	Միսիան
128	Սահակյան Արմեն Արմանի	2000	Գորիս
129	Գրիգորյան Կարեն Արթենի	2001	Հարթաշեն
130	Գրիգորյան Արթուր Վուրդիայի	1977	ք. Քաջարան

Հ.Հ.	Անուն, ազգանուն	Ծննդյան տարեթիվ	Բնակավայրը, (հաշվառման հասցեն)
131	Մարգարյան Գարիկ Լեռնի	1993	Կապան
132	Թունյան Սարո	2000	Աղիտու
133	Գրիգորյան Հայկ Գագիկի	1998	ք. Կապան
134	Ծատրյան Արամայիս Գագիկի	1987	ք. Կապան
135	Հովհաննիսյան Վարդան Գեորգի	2001	ք. Միսիան
136	Վարդազարյան Արծրունիկ Վարդազարի	1958	գ. Վաղատին, փաստացի՝ Էրեբունի
137	Խաչատրյան Արթուր Արարատի	1992	Վերիշեն
138	Մախչյան Ռուբիկ Հովհաննեսի	1969	գ. Մուցք
139	Գալստյան Մարտին Վազգենի	1991	Բռնակոթ
140	Պետրոսյան Խաչիկ Հրաչիկի	1987	Խոտ
141	Բեգլարյան Ալեն Եղիշի	2000	ք. Կապան
142	Գեորգյան Ժորժ Արսենի	2000	ք. Քաջարան
143	Պողոսյան Մանուկ Արթուրի	1991	ք. Կապան
144	Արթին Քրիստափոր Անդրանիկի	1972	ք. Կապան
145	Վարդազարյան Արծրունիկ Վարդազարի	1958	գ. Վաղատին
146	Մկրտչյան Հայկ Արամի	1997	Մեղրի
147	Ավանեսյան Արեն Արամի	2000	գ. Դավիթբեկ
148	Մնացականյան Սպարտակ Լեռնի	2000	ք. Ազարակ
149	Խաչատրյան Հովհաննես Վրեժի	2000	ք. Կապան, Արփիկ
150	Մարտիրոսյան Միեր Կամոյի	1989	Հարժիս
151	Միրզոյան Կարեն Արթուրի	2000	ք. Ազարակ
152	Չաբարյան Անդրանիկ Սամվելի	2002	գ. Վարդանիձոր
153	Դանիելյան Լեռն Գրիգորի	2001	գ. Տաթև
154	Մաշուկյան Արման Արմենի	2000	Վերիշեն
155	Սողոմոնյան Մելիք Սեյրանի	2001	Որոտնավան գյուղ
156	Ավանեսյան Վահիկ Սերյոժայի	1992	Աշոտավան
157	Ալեկոյան Յուրի Միերի	2001	Կապան
158	Սարգսյան Սուրեն Բենիկի	1985	ք. Մեղրի
159	Բազունց Բաբկեն Արսենի	1995	ք. Գորիս
160	Մաթեոսյան Ժիրայր Վազիկի	2001	ք. Կապան
161	Պետրոսյան Տիրան Անդրանիկի	2000	Կապան
162	Գրիգորյան Արա Տարսելիչի	1984	Բռնակոթ
163	Առաքելյան Արտակ Սեյրանի	2000	ք. Միսիան, գ. Բռնակոթ
164	Մելքունյան Սամվել Արտակի	1997	Գորիս
165	Հայրապետյան Աշոտ Արտուրիկի	1998	գ. Խոտ
166	Հարությունյան Դավիթ Յուրիկի	1961	ք. Կապան
167	Ոսկանյան Խաչիկ Ծատուրի	1963	ք. Կապան
168	Սարգսյան Էդգար Դավթի	1979	Դարբաս
169	Ներսիսյան Պողոս Պարգելի	1969	Անգեղակոթ



Նռնածորում գրեթե 200 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքները բնակիչները չեն կարողանում օգտագործել. ՄԻՊ

Սկիզբը՝ էջ 3

իր կամ իր ընտանիքի անդամի կյանքն ու առողջությունը կամ որ օգտագործումն այլևս դարձել է անհնար:

Ընդ որում խոսքը վերաբերում է այնպիսի հողատարածքների, որոնց նկատմամբ իրավունքների, այդ թվում՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը հաստատող վկայականները տրվել են կամ խորհրդային Յայաստանի, կամ Յայաստանի անկախ Յանրապետության տարբեր ժամանակահատվածների իրավասու մարմինների (կադաստրի կոմիտե են այլև) կողմից:

Այսօրվա այցի ընթացքում տեղի են

ունեցել կարելու բնակարաններ Մեղրիի բաղադրատարր, ինչպես նաև 33 զինված ուժերի անձնակազմերի հետ, որոնք իրականացնում են անձնուրաց հերոսական ծառայություն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն այսօրվա այցերի ընթացքում ձեռք են բերել նաև կոնկրետ իրավիճակներով մարդկանց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ փաստեր, որոնց կապակցությամբ կիրականացվեն առանձին ամփոփումներ ու կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ:

ԱՐՄԱՆ ԹԱԹԵՅԱՆ

Ադրբեջանական վերահսկողության տակ են Գորիսը, Որոտանն ու Շուռնուխն իրար կապող ճանապարհի հատվածներ

Սկիզբը՝ էջ 3

սեփականության իրավունքով պատկանող տներից, կենսական ապրուստը հոգալու հնարավորությունից: Այդ համայնքների բնակիչները նաև գրկվել են իրենց մասնավոր սեփականությունը հանդիսացող, իսկ համայնքը՝ համայնքային սեփականություն հանդիսացող կենսական կարելուության գյուղատնտեսական հողատարածքները (օրինակ՝ որպես այգի, վարելահող կամ արոտավայր) օգտագործելու հնարավորությունից:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկումները հաստատում են, որ նշված սկզբունքի պատճառով Ադրբեջանի վերահսկողության ներքո են հայտնվել Յայաստանի բաղադրատարրի պատկանող տներ ու հողատարածքներ, որոնց նկատմամբ իրավունքների, այդ թվում՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը հաստատող վկայականները տրվել են կամ խորհրդային Յայաստանի, կամ Յայաստանի անկախ Յանրապետության տարբեր ժամանակահատվածների իրավասու մարմինների (կադաստրի կոմիտե են այլև) կողմից:

Բացի այն, որ այս ամենի արդյունքում կոպտորեն խախտվել են մարդկանց իրավունքները ու նրանք գրկվել են իրենց սեփականությունից, նաև առաջացել է անտրոջ վիճակ, ինչն իր հերթին ստեղծում է տագնապի մթնոլորտ ու անհանգստություն խաղաղ բնակիչների մոտ:

Յայաստանի սահմանային բնակավայրերի բնակիչների կյանքն ու առողջությունը, նրանց ֆիզիկական անվտանգությունն ու հոգեկան անձեռնմխելիությունն ուղիղ սպառնալիքի տակ է հայտնվել նաև այն պատճառով, որ ստացվել է, օրինակ, Շուռնուխի դեպքում գյուղը բաժանվել է «ադրբեջանական» ու «հայկական» մասերի ու որպես բաժանման հիմք է ընդունվել այդ համայնքով անցող միջպետական ճանապարհը: Բայց հարցն այն

է, որ ճանապարհի մի կողմում «հայկական» մասում [այդ թվում՝ այն վայրերը, որտեղ երեխաները սովոր են խաղալ] խաղաղ բնակիչներ են, իսկ անմիջակառնում մյուս մասում ադրբեջանական զինված ուժերը:

Ուստի, 33 սահմանների հարցը Գուգլ (Google) մասնավոր կազմակերպության հավելվածներով կամ GPS [գլոբալ տեղորոշման] համակարգով լուծելը, որը նաև վտանգում է Յայաստանի պետական սահմանների անձեռնմխելիությունն ու երկրի անվտանգությունը, մեր երկրում ապրող մարդկանց ու հատկապես սահմանային բնակիչների իրավունքների պաշտպանության տեսանկյունից բացարձակ անընդունելի է:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի այցի ընթացքում տեղում Գուգլ (google) բարտեզների մի բանն էր տարբերակներ ցույց են տվել տարբեր արդյունք, այդ թվում՝ մի բանի դեպքում Շուռնուխ գյուղը ներկայացնելով Յայաստանի Յանրապետության տարածքի մաս:

Այսօրվա այցի ընթացքում տեղի են ունեցել կարելու հանդիպումներ Գորիսի բաղադրատարր, Որոտան եւ Շուռնուխ գյուղական բնակավայրերի ղեկավարների ու համայնքային մյուս մարմինների հետ, համայնքների բնակիչների, ինչպես նաև 33 ԱԱԾ սահմանապահ զորքերի անձնակազմերի հետ: Ընդ որում, 33 զինված ուժերի կամ ԱԱԾ սահմանապահ զորքերի անձնակազմերն իրականացնում են անձնուրաց հերոսական ծառայություն՝ չնայած հաճախ է նրանց համար առաջանում անարդարացի, իրենց չվերաբերող ծանրաբեռնվածություն:

Առաջիկա օրերին նախատեսված են այցեր Սյունիքի մարզի այլ բնակավայրեր եւս, որոնց ընթացքում կիրականացվեն անհրաժեշտ մասնագիտական ուսումնասիրություններ ու դիտարկումներ»:

ԱՐՄԱՆ ԹԱԹԵՅԱՆ
08.01.2021

Դավիթ Մաթեոսյան. Նրա կյանքը հայրենապաշտության վառ օրինակ է

Սկիզբը՝ էջ 5

Նուրբան էլ... միշտ երեւում են իրենց ինքնուրույն կերպարանքով, ուժով ու շնորհքով»:

Այդ միտքը, կարծեք, Դավիթ Մաթեոսյանի նկարագիրն ունեցող մարդկանց համար է ավանդ. երկար տարիներ պաշտոն չի ունեցել, նույնիսկ անգործ է մնացել ու հալածվել, բայց միշտ էլ աչքի է ընկել իր ինքնուրույն կերպարանքով, վեհությամբ ու հեղինակությամբ:

Նրա անունն արդեն իսկ լրջություն, հարգանք ու պատկառանք էր առաջ բերում շրջապատում...

Յայրենասիրությունը, հայրենի եզերքին նվիրվածությունը Դավիթ Մաթեոսյանի համար բառեր չէին սոսկ, այլ կոնկրետ գործերի հանրագումար, անմատչելի նվիրում ազգային գործերին...

Դա հատկապես երեսաց 1990-ականներին, երբ հայ ժողովուրդը ոտքի էր ելել հայոց Արցախի ազատագրության համար, երբ հայրենի Արեւիք աշխարհը եւս ռազմական գործողությունների թատերաբեմ էր դարձել:

Փառահեղ Դեռուդ Գովհաննիսյանի հետ կարողացան արժանապատվորեն գլխավորել Մեղրու տարածաշրջանի ինքնապաշտպանությունը:

Քանի-բանի անգամ Սպարապետ Վազգեն Սարգսյանից ինքներս ենք գնահատանքի ու երախտիքի խոսքեր լսել Դավիթ Մաթեոսյանի մասին:

Նրա հայրենասիրության նոր պոռթկումն ակնատես եղանք 2020-ին՝ Արցախյան երրորդ պատերազմում:

Մեյստեմբերի 27-ից հետո վերադարձել էր Մեղրի եւ բազմակողմանի գործունեությունն ծավալել երկրամասի անվտանգության ապահովման ուղղությամբ, մասնավորապես հոկտեմբերի կեսերին թուրք-ազերիները թիրախավորել էին նաև Մեղրու շրջանի արևելյան սահմանամերձը:

Բազմաթիվ ճանաչված գործիչներ, բարձրաստիճան զինվորականներ, կամավորականներ ու շարքային զինվորներ մեզ պատմեցին, թե կազմակերպչական ինչպիսի գործունեություն էր ծավալել Դավիթ Մաթեոսյանն ամրաշինության ոլորտում, աշխարհագրայինների մոբիլիզացման, սահմանի պաշտպանությունն ամուր հիմքերի վրա դնելու ուղղությամբ:

Առանց չափազանցությունների՝ նրա կերպարը պատերազմական այդ օրերին ոգեշնչման աղբյուր էր շատերի համար:

Մարտական առաջադրանքներ կատարելու ժամանակ էլ մահացու վերքեր ստացավ թշնամու անօդաչու սարքի հերթական գրոհի հետևանքով...

Գեներալ-լեյտենանտ Արտակ Դավթյանը ողբերգական այդ պատահարից հետո մեզ պատմեց, թե մարտական ինչպիսի կարելու առաջադրանք էր կատարում Դա-



Յայրենասիրությունը, հայրենի եզերքին նվիրվածությունը Դավիթ Մաթեոսյանի համար բառեր չէին սոսկ, այլ կոնկրետ գործերի հանրագումար, անմատչելի նվիրում ազգային գործերին...

վիթ Մաթեոսյանը Յայաստանի Յանրապետության հարավ-արեւելքի այդ հատվածում:

Դավիթ Մաթեոսյանը յուրովի էր վերաբերվում Արցախյան նոր պատերազմին, ինչն արտացոլված է նրա վերջին հարցազրույցներից մեկում՝ «Արցախյան այս պատերազմին պետք է վերջ տրվի բաղադրական միջամտությամբ...»: Նաև ցավ էր ապրում, որ իր սերունդը չկարողացավ Արցախյան հիմնախնդիրը վերջնականապես լուծել ու այն թողնել հաջորդ սերունդին. «Տավոք մենք երկրորդ անգամ ենք սերունդ կորցնում...»:

Դավիթ Մաթեոսյանի նկարագիրն արտացոլող եւս մի բանի շորիքիս. համարձակ անձնավորություն էր, ազատության, ժողովրդավարության, արդարության իսկական մարմնավորում:

Կամայական դատավճռով մոտ մեկուկես տարի մնաց բանտարկված, բայց նրա մեջ նեղացածություն, չարություն, ընկճվածություն չծարձակեց երբեք, իսկ երկրի, ազգի վաղվա օրվա հանդեպ լավատեսությունն ու հավատը չնահանջեցին:

Եվ ուրեմն՝ երիցս ափսոս, որ այլևս մեզ հետ չէ, որ նրա բարձր ներկայությունն այսուհետ բացակայելու է դժվարագույն ընթացքի մեջ գտնվող մեր երթից, որ նրա նվիրական բազում ծրագրեր անավարտ մնացին...

Դավիթ Մաթեոսյանի մահվան բողոք լսեցինք պատերազմական ամենածանր ժամանակաշրջանում:

Շաղկաճ-չիտված այդ օրերին չկարողացանք նույնիսկ իրաժեշտ տալ նրան ընդհանուր, ընդհանուր ժողովուրդում:

Եվ հիմա՝ մոտ երկու ամիս անց, խորին պատկառանքով ու երախտագետ սրտով վերստին խոնարհվում ենք նրա պայծառ հիշատակի առջեւ:

«Այոնյաց երկիր» խմբագրակազմի, անձամբ իմ եւ ընտանիքիս անունից վշտակցում ենք մեր լեռնաշխարհի երեւելի դուստր Սուսաննա Սարգսյանին. ինչպիսի գեղեցիկ ընտանիք էին ստեղծել Դավիթ Դեռուդիցի հետ: Իսկ հիմա... Գովհաննիսյան, հրաշալի զավակների հետ, համոզված ենք, ամեն ինչ անում է եւ անելու է, որ Դավիթ Մաթեոսյանի երազանքներն ու իրձերը հնարավորիսս ի կատար ածվեն...

Մենք էլ պարտավոր ենք պետական մակարդակով եւ ըստ պատշաճի գնահատել Դավիթ Մաթեոսյանի նվիրական գործունեությունը:

Մեղրիում էլ... Վստահ ենք՝ կգտնվեն երախտավորներ, ովքեր արժանավայել մակարդակով կհավերժացնեն Դավիթ Մաթեոսյանի հիշատակը՝ դրանով իսկ գալիքի սերմնացաններին ցույց տալով, թե ինչպիսի արժանապատիվ ու վեհանձն զավակ է Արեւիք աշխարհը նվիրել հայ ժողովրդին:

...Վերջում շեղվենք ավանդակարգից, մի պահ դուրս գանք իրականությունից ու խոսք ուղղենք հենց իրեն՝ երկնային թագավորությունում այլևս հանգրվանած Դավիթ Մաթեոսյան մարտիրոսին՝ «Գարգելի բարեկամ, թող օրհնված լինի քո հիշատակը. հանուն հայրենիքի շունչը տալուց հետո էլ՝ քո անվանք ու գերեզմանով շարունակում ես ազնվացնել ու բարձրացնել Այոնյաց սրբազան աշխարհի անունը, պատիվն ու արժանապատվությունը, եւ ուրեմն՝ շիրիմը միշտ լույսի մեջ լինի: Իսկ հերոսական Սյունիքում, վստահ եղիր, կրկին թեւ են առնելու Սիսակ նահապետի, Անդրկ մեծ իշխանի ու Նոյեմի ոգիները, եւ ոչ մի ուրացող չի կարողանալու անդամահատել ու բարոյագրել սատկածասկիզբ եւ սրբատուրք մեր հայրենիք Սյունիքը»:

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՍՅԱՆՅԱՆ

ԳԱԳԻԿ ԶԱՄԲԱՐՅԱՆ. «ԻՆՆ Ե ԵՂԱՆԱԿՈՒՄ GPS-ՈՎ ՍԱԽՄԱՆԱԳԱՏՈՒՄ. ՎՍՏԱՄԻ ԵՔ, ՈՐ ԹՅՆԱՄԻՆ Google-ի սեփականատիրոջ հետ՝ ի շահ իրեն, հարցեր չի լուծել»

Aravot.am-ի հետ զրույցում քաղաքագետ Գագիկ Զամբարյանը խայտառակություն որակեց Սյունիքի արեւելյան հատվածում Ադրբեջանի ու Հայաստանի սահմանների սահմանազատումը GPS համակարգով:



«Խայտառակությունը գիտեք որն է, որ GPS համակարգով են սահմանազատումը կատարում, GPS-ը Google-ի սեփականությունն է, իսկ Google-ը շահույթ հետապնդող կազմակերպություն է: Որեւիցե մեկը երաշխավորել է, որ Ադրբեջանի կամ Թուրքիայի ղեկավարությունը Google-ի սեփականատիրոջ հետ չեն կապվել և չեն խնդրել, որ սահմանները մի քանի կիլոմետր արեւմուտք տանեն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության:»

Երկրորդը՝ ինչո՞ւ 2020 թվականի ապրիլին Լիկոլ Փաշինյանը լիկվիդացրեց «Գեոդեզիայի եւ քարտեզագրության» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, երբ որ այնտեղ բոլոր փաստաթղթերը պահվում էին:

Երրորդը՝ սահմանազատում է անում ու հայտարարում է՝ Սյունիքի մարզից որեւէ թիզ հող Ադրբեջանին չի անցնում: Լավ, ընդունենք, չի անցնում, հասարակության մեծ մասը Հայաստանի աշխարհագրությունից տեղյակ չէ, չեն ասում աշխարհի, հենց Հայաստանի, Սյունիքը լեռնային տարածք է, որտեղ բնակավայրերի մեծ մասը կիրճերում են գտնվում:

Այս սահմանազատման արդյունքում Սյունիքի մարզի 13 բնակավայր ուղղակիորեն հայտնվել են ադրբեջանական զինուժի անմիջական թիրախի տակ: Մատչելի բացատրելու համար Լեւոնը, պատկերացրեք՝ ապրում եք սեփական մեկ հարկանի տանը, որի կողքին կա հինգ հարկանի շենք, եւ այդ շենքը եղել է ձերը, Լիկոլ Փաշինյանը եկել է, այդ շենքը հանձնել է ձեր թշնամուն, որն ամեն ռոպե Նայում է, որ ձեզ վնասի, եւ շենքի հինգերորդ հարկում թշնամին հաստատվում է: Հինգերորդ հարկից վերահսկում է թե՛ ձեր տունը, թե՛ ձեր բակը: Հիմա այդ կարգավիճակում 13 բնակավայրերն են, այդ թվում Կապանը, Գորիսը, Խնձորեսկը, Տեղը:

Ել չեն խոսում Շուռնուխի մասին, ինձ թվում է՝ Լիկոլ Փաշինյանը Շուռնուխից

վրեժխնդիր եղավ, որովհետեւ իր իշխանության գալուց հետո իրեն սատարող այլատերերը մի գանգված այնտեղ փարթի եր կազմակերպել, որի համար ծեծվեցին: Հիմա Շուռնուխից մի հատված անցնում է Ադրբեջանին:»

Ըստ քաղաքագետի՝ Լիկոլ Փաշինյանը թե՛ն անընդհատ հայտարարում է, թե՛ տարածքներ չենք տվել, բայց իրականում թշնամուն է հանձնել այդ տարածքները վերահսկող բարձրուկները:

«Անընդհատ ասում է՝ մենք տարածքներ չենք տվել, ինքը լավ գիտի, որ տարածքներ չտալով՝ այնպիսի բարձրուկներ է տվել թշնամուն, որ թշնամին այդ բարձրուկներից գրեթե ամբողջությամբ վերահսկում է իրավիճակը Հայաստանի հարավում գտնվող խոշորագույն բնակավայրերում: Ել չեն ասում, որ եւս 17 բնակավայր դարձել են սահմանամերձ:»

Բացի այդ, հայտարարում է՝ «5+2» տարբերակով որ առաջարկած է եղել, դա եւս պետք է հանձնվեր, սուտ է, այդպիսի բան չկա: Առաջինն՝ այդ շրջանները շատ արագ չափտի հանձնվեին ավրա կերպով, ինչպես ինքն արեց: Հանձնվելու հետ մեկտեղ, եթե նախկինում այդ գործարքը լիներ, մենք պատրաստ պիտի լինեինք այդ ամենին, ոչ թե ստեղծվեր այս վիճակը, երբ քաղաքացիները երթեւեկում են Գորիսից դեպի Կապան, ադրբեջանցի զինվորականները հայտնվում են իրենց դիմաց: Եվ եթե այդ զինվորականները կանգնեցնեին մեքենաները եւ գերի վերցնեին, Լիկոլ Փաշինյանը նորից կչքմեղանար եւ կասեր՝ ես մեղավոր չեմ, նախկիններն են մեղավոր:»

Այն թեզը, որ ինքը Սյունիքից հող չի տվել, մանիպուլյատիվ է ու կեղծիք է: Հող չտալով՝ ինքն ադրբեջանցիներին հնարավորություն է տվել ահռելի տարածքներ վերահսկել Սյունիքում՝ թշնամուն տրամադրելով մեր նախկին հարմարավետ դիրքերը:

Այս ամենի հետեւանքը կլինի Սյունիքի հայաթափումը, քանի որ ոչ բոլորը կհամաձայնեն ապրել մշտապես սպառնացող վտանգի ներքո այն բնակավայրերում, որոնց նկատմամբ ադրբեջանցիներն ունեն հարմարավետ եւ վերահսկող դիրքեր:», – ասում է Գագիկ Զամբարյանը: //

Շուռնուխ. 45 ընտանիքից երկուսն են գյուղից դուրս եկել, որոնց վերադարձի համար պայմաններ են ստեղծվում

Սկիզբը՝ էջ 1

համոզված եմ՝ անպայման կվերադառնան: Սյունիքը գյուղում են եւ զբաղվում են իրենց առօրյա գործերով:

– **Որքանով հասկացանք՝ 11 ընտանիքը հանգրվանել է ժամանակավոր, ոչ իրենց պատկանող տներում, իսկ հետո՞...**

– Նախ նշեմ, որ գյուղի բնակիչներն ամուր են կանգնած իրենց հողի վրա, եւ ոչ ոք գյուղը լքելու մտադրություն չունի: Տեսնելով նրանց վճռականությունը՝ կարող եմ հայտարարել՝ Շուռնուխն ապրելու եւ զարգանալու է...:

11 ընտանիքի բնակարանային խնդիր լուծման մի քանի տարբերակ ունենք, որոնցից մեկը, ասենք, գյուղի հասարակական կառույցների (բայց եւ չօգտագործվող) շենքերի վերանորոգումն ու բնակելի դարձնելն է: Սակայն դա բնակիչների որոշելիք է, մենք կգնանք խնդիր լուծման այն ճանապարհով, որը նախընտրելի կլինի բնակիչների համար: Մոտ ժամանակներս այդ հարցը վերջնական պատասխան կունենա:

– **Դուք ասացիք, որ տարիանված ընտանիքները հասցրել են իրենց գույքը դուրս բերել, բայց չէ՞ որ անշարժ գույքի խնդիր էլ կա, մարդիկ 28 տարի ապրել են այդտեղ եւ ինչ-որ օժանդակ կառույցներ են պատրաստել, տների կցակառույցներ շինել...**

– Արդեն սկսել ենք այդ ամենի հաշվառումը, փաստագրումը, ինչի հիման վրա էլ կկատարվի փոխհատուցում:

– **Այդ սահմանորոշում կոչվածից հետո գյուղը հավանաբար կորցրել է նաեւ արտադրական միջոցներ՝ վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր:**

– Շուռնուխը չի կորցրել ոչ արոտավայր, ոչ խոտհարք, ոչ վարելահող: Շուռնուխի արոտավայրերն ու խոտհարքները գտնվում են Կատարիի մերձակայքում, երբեմնի Ադրբեջանի Կուրթլյալ գյուղերի հարակից տարածքներում: Կա միայն տնամերձերի խնդիր, որը լուծելի է: Խնդիրներ չունենք 21 աշակերտ ունեցող դպրոցում, գյուղի մյուս ենթակառուցվածքներում:

– **Եվ, այդ բոլորով հանդերձ, գլխավոր հարցը շարունակում է մնալ բնակչության անվտանգության ապահովումը:**

– Մայրուղու այդ հատվածը վերահսկում են ռուս սահմանապահները: Ճանապարհից մոտ 100 մ ներքեւ՝ վրաների մեջ, ադրբեջանական հենակետն է՝ իրենց սահմանապահ ուժերի զինվորներով: Ճանապարհի վերին մասում Հայաստանի սահմանապահ զորքերի ստորաբաժանումն է: Ներկայումս անվտանգության այսպիսի համակարգ է ներդրված, որն ավելի է ուժեղացվում:

– **Ձեր պատասխանները հիմք ընդունելով՝ կարո՞ղ եք եզրակացնել, որ Շուռնուխի հետ կապված բոլոր հարցերը լուծվել կամ լուծման ընթացքի մեջ են:**

– Իհարկե ոչ: Քանի դեռ գլխավոր խնդիրը՝ սահմանազման-սահմանադրման հարցը չի լուծվել հիմնովին ու ճշգրտորեն, Շուռնուխի հարցը մնալու է բաց...

Եվ ոչ միայն Շուռնուխի, այլեւ Կապան-Գորիս մայրուղու, ինչպես եւ Սյունիք-Ադրբեջան սահմանագծի վիճելի հարցերն են մնալու բաց...

Հիմա որակաբար կարգավորվում են խորհրդային ժամանակաշրջանի քարտեզներով, որոնք շատ դեպքերում համոզիչ չեն, կասկածելի են:

Համեմատեք 1920-ականների եւ 1980-ականների խորհրդային քարտեզները եւ ինքներդ կհամոզվեք, թե որքան մեծ է տարբերությունը:

Իհարկե, սահմանազման եւ սահմանորոշման հարցերը ՀՀ սահմանապահ զորքերի, ԱԱԾ համապատասխան կառույցների գործառնությունների տիրույթում են, բայց մենք էլ (մեր լիազորությունների եւ հնարավորությունների սահմաններում) փորձում ենք մեզ մատուցված քարտեզների հիմքերը գտնել՝ համագործակցելով մասնագետների հետ:

Հավատացե՛ք, ինձ համար չափազանց ցավոտ է ստեղծված իրավիճակը, կյանքիս գլխավոր գործն եմ համարել հայոց տարածքների ազատագրումը եւ ինձանից կախված ամեն ինչ արել եմ՝ քանիցս արհամարելով մահը:

Հիմա էլ՝ շաբաթական չորս-հինգ անգամ անցնում եմ Գորիս-Կապան մայրուղով. եւ ամեն անգամ ցավիս ցավ է ավելանում...

Ինձ ապրեցնում եւ ուժ է տալիս հավատը, որ մի օր անպայման այդ հարցերը հայաստատ լուծում են ստանալու:

– **Պարոն մարզպետ, վերջին հարցս, որ շատ կարեւոր է եւ Լույսպետ ցավոտ, հետաքրքրում է ամեն մի հայի:**

Վերջին օրերին մամուլը բարձրաձայնում է մեր հերոս տղաների՝ Կապանի բժշկական կենտրոնում գտնվող 43 աճյունների պահպանման ոչ բարձր պայմանների մասին...

– Մարտական գործողությունների վայրերում վերջերս հայտնաբերված այդ աճյունները տեղափոխել ենք Գորիսի դիախերմարան, որտեղ կան համապատասխան պայմաններ, որտեղ կիրականացվի դատաբժշկական փորձաքննություն, որտեղ կորոշվի մեր նահատակներից յուրաքանչյուրի ինքնությունը:

Օգտվելով առիթից շնորհակալություն եմ հայտնում Կապանի դատական բժիշկ Իշխան Սիմոնյանին եւ Գորիսի դատական բժիշկ Հունան Գալստյանին. առանց նրանց հետեւողական ու պրոֆեսիոնալ աշխատանքի հնարավոր չէր լինի այդ եւ նմանատիպ մյուս խնդիրները պատշաճ մակարդակով լուծել, որին բախվում ենք սեպտեմբեր ամսից ի վեր:

ԶՈՐԻՅՑԸ՝ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ 04.01.2021

Շուռնուխ, 2.01.2021 թ., հայր նորից տնագուրկ եւ տնանկ է դառնում, իսկ մենք՝ ազգովի, շարունակում ենք միմյանց կոկորդ պատռել՝ Լիկոլին է լավ, Վազգե՛նը, Ռոբե՛րտը, թե՛ ...

Սկիզբը՝ էջ 1

այն էլ՝ 21-րդ դարում: Պատմության երջանակահիշատակ ուսուցիչ ժամանակին նման երեւոյթները բացատրում էր մեկ արտահայտությամբ՝ «Պետություն չունեինք...»:

Իսկ հիմա... Ի՛նչ պատասխան ունենք ինքներս մեզ, ի՛նչ պատասխան ենք տալու մեր երեխաներին ու թոռներին:

Մինչդեռ, հայոց համար ճակատագրական այս պահին մեզ համար, կարծեք, այլեւս անկարելի է հայրենագրության շարունակվող դրաման, հայոց պետականության փլուզման ակնհայտ իրողությունը:

Հիմա մեկ ուրիշ հարց է կարելու եւ իշխանավորների համար, եւ ընդդիմադիրների համար, եւ նրանց հետետրոյթների համար՝ Լիկոլին է լավ, Վազգե՛նը, Ռոբե՛րտը, թե՛ ...

Ոչինչ, որ հայոց պետականության առանցք, հայոց լինելիության հավերժական ամրոց Սյունիքը մեր աչքի առաջ անդամահատվում է, որ հայոց պետականությունը հոգեվարք է ապրում, կարելու պարզելն է՝ Լիկոլը շատ մարդ կարող է փողոց հանել, Վազգե՛նը, Ռո-

բե՛րտը, թե՛ ...

Հ.Գ. Սյունյաց աշխարհի Բաղբ-Քաշու-նիք գավառի հնամենի Շուռնուխ գյուղն ադրբեջանցիներով բնակեցվել է 1930-ականներին: Մինչ այդ ու երբեք այդտեղ թուրք չի բնակվել:

Թե երբ է Շուռնուխը (Շուռնուխ, Շուռնուխ, Շուռնուխ եւ այլն) հայաթափվել, մատենագիրները չեն հիշում: Մատենագիրները սակայն հիշում են, որ 19-րդ դարավերջին արդեն այնտեղ ոչ ոք չէր բնակվում, բայց կար հայոց հրաշալի մի եկեղեցի՝ կիսաքանդ վիճակում: Շուռնուխ ավերակ գյուղը 1930- ականներին ադրբեջանցիներով բնակեցվելուց հետո գյուղի եկեղեցուն հետքերը մեկընդմիջտ վերացվեցին...

Հիմա գյուղի կենտրոնի փոքր բլրակի վրա կանգնեցված է երկաթե մի խաչ, որի լուսավորված վիճակը գիշերային խավարի մեջ երեւում է Բաղբ-Քաշու-նիքի տարբեր կողմերից: Ի՛նչ ճակատագիր կունենա հայոց լինելության վկա այդ խաչը...

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ // Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջը հայտարարում է մրցույթ Նախնական գիմնորական պատրաստության ուսուցիչ /Չինելի/ թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն իրականացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:


Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է,
2. Փաստաթուղթ /դիվանդ/ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 2021 թվականի փետրվարի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչեւ 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթի տեղի կունենա 2021 թվականի փետրվարի 12-ին՝ ժամը 12:00-ին, Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջում: Մանրամասն տեղեկությունների համար դիմել հետեւյալ հասցեով՝ Բ. Կապան, Գ. Արզումանյան 11ա: Հեռախոս (0285) 5 30 61:

Այլեւս մեզ հետ չէ Կապանի երեւելի գավակ Գառնիկ Զակոբյանը

2020 թ. դեկտեմբերի 18-ին երկրային կյանքին հրաժեշտ տվեց Գառնիկ Արմենակի Զակոբյանը:



Ծնվել է 1942 թ. հունիսի 26-ին Կապանի շրջանի Լորաշենի գյուղում:

Սկզբնական կրթությունը ստացել է տեղի տարրական դպրոցում, ապա տասնամյակն ավարտել Շրվենանցի միջնակարգ դպրոցում: Այնուհետև ուսումը շարունակել է Քաջարանի շինարարական տեխնիկումում:

1960-63 թթ. խորհրդային բանակում ծառայելուց հետո վերադարձել է Կապան եւ շարունակել ուսումը՝ ավարտելով տեխնիկումը:

Մասնագիտական կրթություն ստանալուց հետո աշխատանքի է անցել «Քաջարանշին» տրեստում՝ վարպետ:

1978-93 թթ. աշխատել է Կապանի գազացման կայանում՝ արտադրամասի պետ:

1995-97 թթ. Կապանի Դավիթ Բեկ թաղամասի համատիրության նախագահն էր, ապա՝ բնակավայրի պետը:

Զետագայում «Ե-Ի-Տի Սերվիս» ՍՊ ըն-

կերության տնօրենն էր:

Գառնիկ Զակոբյանը մարզական Կապանի երախտավորներից էր, բանգի մեծ ներդրում է ունեցել սպորտի բնագավառում, նաեւ արել է հնարավորը մարզական Կապանը Հայաստանում ճանաչելի դարձնելու համար:

Դեռեւս պատանեկան տարիներին ի հայտ է եկել նրա հակումը սպորտի հանդեպ: Հատկապես վոլեյբոլի մարզածեղում ընդգրկվել է Հայաստանի պատանեկան հավաքականում եւ մասնակցել բարձրագույն խմբի առաջնություններին՝ արձանագրելով բազում հաջողություններ:

Գառնիկ Զակոբյանն է հիմնադրել «Գանձասար» ֆուտբոլային ակումբը, որը Հայաստանի մարզաշխարհում ժամանակին մեծ հռչակ ու փառք է բերել Կապանին:

Օրինակելի ընտանիք էր ստեղծել, ունեցել երեք զավակ:

Սակայն անցել է անձնական մեծ դժբախտությունների եւ չարչարանաց ճանապարհով՝ 1992-ին կորցրել է 24-ամյա Լորայր գավակին, 2000-ին՝ 25-ամյա Արթուրին: Եվ այդուհանդերձ, իր մեջ ուժ ու կամք է գտել՝ անձնական մեծ վշտին զուգահեռ ուրույն տեղ ունենալ Կապանի կյանքում:

Վաղամեռիկ որդու՝ ֆուտբոլիստ Արթուր Զակոբյանի հիշատակին տասը տարի շարունակ ֆուտբոլային մրցաշար է կազմակերպել:

Գառնիկ Զակոբյանը մեծ հեղինակություն էր վայելում Կապանում եւ տարածաշրջանում, ինչի համար էլ նրա մահն անկեղծ ափսոսանքով է ընդունվել:

«Սյունյաց երկիրը» նույնպես ափսոսանք է հայտնում եւ ցավակցում Գառնիկ Զակոբյանի հարազատներին ու մերձավորներին՝ համոզված լինելով, որ նրա հիշատակն ու բարի անունը կապրեն ոչ միայն մերձավորների, այլեւ կապանցիների սրտերում:



Չորսն էլ հաղթող դարձած վերադարձան

Կորունավորուց կաթվածահար արեց նաեւ մարզական կյանքը: Համավարակի պատճառով հետաձգվեցին Տոկիոյում կայանալիք օլիմպիական խաղերը, որ չորս տարին մեկ է անցկացվում, ֆուտբոլի եվրոպայի առաջնությանը, ընդհատվեցին ամենամասսայական մարզաձեւի՝ ֆուտբոլի առաջնությունները (եւ ոչ միայն) եվրոպական երկրներում: Վերսկսվելուց հետո հանդիպումներն անցկացվում են առանց հանդիսականների:

Եվ ահա վերջերս մարզական կյանքը, կարծես, կենդանության նշաններ է ցույց տալիս: Տեսական ընդմիջումից հետո չորս մարզիկով Սյունիքի մարզի քիթ բոքսինգի «Գարեգին Նոյե» ակումբը մասնակցեց հանրապետական մրցման՝ Հայաստանի քիթ բոքսինգի ուժեղագույն ակումբների առաջնությանը: Նախ՝ կորունավորուհի, ապա՝ Արցախյան պատերազմի պատճառով, բռնցքամարտիկները կանոնավոր չէին մարզվել, բայց, այնուամենայնիվ, կապանցի մարզիկների մրցելույթները հաջողված կարելի է համարել: Իննամյա Վաչե Դազարյանը (23 կգ քաշային կարգ) եւ Տիգրան Դավթյանը (31կգ), 14-ամյա Դավիթ Բաբախանյանը (մինչեւ 47 կգ քաշային կարգ) եւ Վաչե Գյուբուրդադյանը (50

կգ), դարձան առաջնության հաղթողներ:

Ինչպես «Սյունյաց երկիր» հետո կշեց ակումբի մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ Արա Սարգսյանը, ավելի տպավորիչ ելույթներ էր սպասում իր սաներից: Բայց, ինչպես ասում են, հաղթողներին չեն դատում: Մարզիչը նաեւ հույս հայտնեց, որ մարզիկները աստիճանաբար ձեռք կբերեն իրենց լավագույն մարզավիճակը, եւ տեղեկացրեց, որ Արցախի Հանրապետությունից հրավեր ունեն մասնակցելու մրցման:

Արա Սարգսյանին այս անգամ ընկճված տեսա, եւ պատճառը միանգամայն հիմնավոր էր, Արցախյան պատերազմում զոհվել է ակումբի նախկին սան Յուրի Ալեքոյանը: Ծառայել է Մարտունի 2-ում որպես հրետանավոր: Հինակից ընկերները նրան Մոնթե էին անվանում՝ մարդկային տեսակով եւ ազգասիրությամբ նմանեցնելով Մոնթե Մելքոնյանին:

Հավերժի ճամփորդ դարձավ ընդամենը 19 տարեկանում: Լույսով ողորվի շիրմի, հայրենիքի գիւղի:

«Սյունյաց երկիր» թերթը ցավակցում է նահատակ մարտիկի մտերիմներին եւ հարազատներին, գորակցություն հայտնում Ալեքոյանների ընտանիքին:

ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ // «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագիրը «Ֆինանսական մասնակցային մոտեցման» բաղադրիչի շրջանակներում «Խուստուփ» ՀԿ-ի միջոցով հայտարարում է դպրոցների համար ծրագրերի մրցույթ

Մրցույթը նախատեսված է ՀՀ Սյունիքի մարզի 4 թիրախային քաղաքների՝ Կապան, Քաջարան, Մեղրի, Ագարակ դպրոցների համար: Լավագույն ծրագրի համար տրամադրվող գումարի չափը կազմում է մինչեւ **1,500,000 ՀՀ դրամ**: Դպրոցի կողմից ներկայացվելիք ծրագիրը պետք է համապատասխանի հետևյալ սկզբունքներին.

- պարունակի բնապահպանական բաղադրիչ,
- պարունակի էկոլոգիական բաղադրիչ,
- ապահովի կայունություն եւ շարունակականություն,
- ունենա կրկնօրինակման ներուժ,
- լինի ցուցադրական եւ նորարարական,
- ապահովի աշակերտների մասնակցությունը ծրագրի իրականացման գործընթացին,
- լինի իրատեսական՝ ծրագրի բյուջեի տեսանկյունից
- լինի իրատեսական՝ ծրագրի իրականացման ժամկետների (մինչեւ 3 ամիս) տեսանկյունից

Յուրաքանչյուր դպրոց կարող է ներկայացնել միայն 1 ծրագիր: **Ծրագրերի ընդունման վերջնաժամկետը՝ 15.02.2021**

«ԽՈՒՍՏՈՒՓ» Բնապահպանական ՀԿ **Հեռ.՝ (+374 77) 13 18 01**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ // «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագիրը «Ֆինանսական մասնակցային մոտեցման» բաղադրիչի շրջանակներում «Խուստուփ» ՀԿ-ի միջոցով հայտարարում է տնային տնտեսությունների համար փոքր ծավալի բիզնես-ծրագրերի մրցույթ

Մրցույթը նախատեսված է ՀՀ Սյունիքի մարզի 4 թիրախային քաղաքների՝ Կապան, Քաջարան, Մեղրի, Ագարակ տնային տնտեսությունների համար: Մեկ փոքր ծավալի բիզնես-ծրագրի համար տրամադրվող գումարի չափը կազմում է մինչեւ **700,000 ՀՀ դրամ**:

Տնային տնտեսությունների համար Փոքր ծավալի բիզնես-ծրագիրը պետք է համապատասխանի հետևյալ սկզբունքներին.

- լինի կայուն եւ շարունակական,
- լինի իրատեսական՝ ծրագրի բյուջեի (մինչեւ 700,000 ՀՀ դրամ) տեսանկյունից,
- լինի իրատեսական՝ ծրագրի իրականացման ժամկետների (մինչեւ 3 ամիս) տեսանկյունից,
- բացառի կամ հնարավորիս նվազեցնի շրջակա միջավայրի եւ բնության վրա բացասական ազդեցությունը,
- ստեղծի նոր աշխատատեղեր/ապահովի զբաղվածություն,
- նկարագրի հնարավոր ռիսկերը եւ դրանց հաղթահարմանը ուղղված միջոցառումները,
- նկարագրի ակնկալվող արդյունքը եւ դրա ազդեցությունը ընտանիքի վրա: Յուրաքանչյուր տնային տնտեսություն պետք է ներկայացնի միայն 1 բիզնես-ծրագիր: Ծրագրում չնշել անուն ազգանուն, հասցե, հեռախոսահամար:

Ծրագրերի ընդունման վերջնաժամկետը՝ **26.02.2021թ.:**

Կապանի եւ Քաջարանի բնակիչները ծրագրերը ներկայացնեն ք. Կապան, Շահումյան փողոց 4/1 (Նախկին կենցաղի շենք) հասցեով, իսկ Մեղրու եւ Ագարակի բնակիչները՝ ք. Մեղրի, Աղեյան 3 (Կանանց ռեսուրս կենտրոն) հասցեով:

«ԽՈՒՍՏՈՒՓ» Բնապահպանական ՀԿ **Հեռ.՝ + (374 77) 13 18 01, (374 93) 02 55 35**

ՇՆՈՐՀԱՎԱՍՏՈՒԹՅՈՒՆ // Ի սրտե երախտագիտություն եմ հայտնում լիբանանահայ բարեգործ Սեպուհ Շիրտեանին: Տարիներ ի վեր սրտի եւ խղձի թելադրանքով նա օգնության ձեռք է մեկնել գոհված եւ վիրավոր ազատամարտիկներին, հաշմանդամության սայլակ է հատկացրել առաջին կարգի հաշմանդամ Կարինե Աթոյանին, ինչպես նաեւ պարբերաբար օգնում է կարիքավոր ընտանիքների:

Ձեզ ամուր առողջություն եւ երկար տարիների կյանք, պատվական Սեպուհ Շիրտեան: **ԱՆԱՀԻՏ ԱՄԻՐՅԱՆԱՆ**

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԴՐՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ԳՈՒԿԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32: (+374 285) 5 25 63 (+374 91) 45 90 47 (+374 77) 45 90 47 syuniacyerki@mail.ru www.syuniacyerki.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կյուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՐՎԱԾԴ» - ԾԱՆՈՒՑՈՒՄ բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Թե նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 13.12.2021թ.: